ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական սոցիալական խարտիայի և Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի կառավարման կոմիտեի 151-րդ նիստին մասնակցելու նպատակով կատարած այցի արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը. Զբաղեցրած պաշտոնը.**

Մարիետա Սարգսյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ստրասբուրգ (Ֆրանսիայի Հանրապետություն) 2025 թվականի նոյեմբերի 17-21

3. **Հրավիրող կողմը.**

Եվրոպայի խորհուրդ

4. **Գործուղման նպատակը.**

Եվրոպական սոցիալական խարտիայի և Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի կառավարման կոմիտեի նիստերը գումարվում են տարեկան երկու անգամ: Նիստերի նպատակն է քննարկել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից Եվրոպական սոցիալական խարտիայի և Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի կիրարկման հետ կապված հարցերը: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները խարտիայի դրույթների կիրարկման ընթացքի վերաբերյալ ազգային զեկույցներ են ներկայացնում: Ներկայացված զեկույցների հիման վրա Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն եզրակացություններ է ուղարկում խարտիայի դրույթների նկատմամբ անդամ պետությունների օրենսդրությունների անհամապատասխանությունների վերաբերյալ: Նշյալ անհամապատասխանությունների հետ կապված հարցերը քննարկվում են

կոմիտեի նիստերի ընթացքում և կայացվում են որոշումներ: Խարտիայի առաջին խմբում ներառված հոդվածներով կարգավորվող հարցերի վերաբերյալ զեկույցը սույն թվականի հունվարի 27-ին ներկայացվել է ԱԳՆ՝ ԵԽ քարտուղարությանը տրամադրելու նպատակով:

5. Քննարկված թեմաները.

Քննարկվել է ԵԽ-ում Մոլդովայի նախագահության շրջանակներում, 2026 թ. մարտի 18-ից 19-ը Քիշնևում կայանալիք Եվրոպական սոցիալական խարտիայի հերթական բարձրաստիճան համաժողովին վերաբերելի հարցերը: Մոլդովայի ներկայացուցիչը նշեց, որ ընթանում են բովանդակային և լոգիստիկ ուղղություններով նախապատրաստական աշխատանքները, մասնավորապես՝ միջոցառման անցկացման վայրի, ինչպես նաև մասնակիցների համար հնարավորինս մատչելի հյուրանոց ամրագրելու հետ կապված աշխատանքները:

Քննարկվել է 2022 թ. սեպտեմբերի 27-ի ԵԽ Նախարարների կոմիտեի որոշման համաձայն՝ Եվրոպական սոցիալական խարտիայի կոլեկտիվ բողոքների ընթացակարգը դեռևս չվավերացրած անդամ երկրների կողմից երկու տարվա պարբերականությամբ զեկույց ներկայացնելու պահանջի շրջանակում Խարտիայի համապատասխան հոդվածների վերաբերյալ զեկուցման լավագույն փորձը, ընթացակարգերի առավել դյուրին լինելը:

Քննարկվել են անդամ պետությունների կողմից Խարտիայի դեռևս չվավերացված դրույթներին հնարավոր միանալու մասին հարցերը:

Անդրադարձ է կատարվել վերոնշյալ հաշվետու ժամանակահատվածում զեկույց չներկայացրած երկրներին, որոնք էին Ալբանիան, Առուբան, Նիդերլանդներն ու Իսլանդիան:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպումներ տեղի չեն ունեցել: Կառավարական կոմիտեի բոլոր անդամներով ներկայացրել ենք Քիշնևում կայանալիք միջոցառման մասնակցության մասին տեղեկատվությունը, նոր զեկուցման համակարգի դրական և բացասական

կողմերի մասին կարծիքները, Խարտիայի նոր դրույթներին միանալու մասին տեղեկատվությունը՝ ՀՀ մասով Խարտիայի 11-րդ հոդվածին միանալու մասին եմ խոսել, նոր զեկուցման համակարգի դրական կողմերով եմ կիսվել, ինչպես նաև անդրադարձել եմ ՀՀ համար 2024 թվականին Խարտիայի 7 և 17 հոդվածներով ընդունված եզրակացություններից (Recommendation) հետո տեղի ունեցած զարգացումներին:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Վերընտրվեց Կառավարական կոմիտեի անդամը, ինչպես նաև 4 բյուրոի անդամներ:

Պաշտոնական հրավերներ պետք է ուղարկվեն Մոլդովայում կայանալիք միջոցառման մասնակիցներին:

Քննարկվեց կենսապահովման ծախսերի ճգնաժամի ժամանակ սոցիալական իրավունքների պաշտպանության վերաբերյալ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված հանձնարարական-առաջարկի նախագիծը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Քարտուղարության կողմից առաջարկվեց մինչև սույն թվականի նոյեմբերի 27-ը ներկայացնել վերոնշյալ հանձնարարական-առաջարկի նախագծի վերաբերյալ վերաջնական դիտարկումները:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

27.11.2025